նլսեանք, եւ դեռ եւս Եղիազարեանք անգլտակք։ Այսպէս ի ձեռն չարեաց Պօղոսեանք և Ապօղոսեանք եղև յերկուս բաժանեալ Հայք քաղաքիս, զբան եւ զգործ թողեալ զբուն չաբաթս կռիւ առնէին։ Եւ Եղիազարեանք յՈւսկիւտարն նստէին առ նայ եւ Յովանիսեանք առ այն նստէին եւ գրէին զկիր վարդապետաքն առ միմեանս և ջանային յաղթելն և ոչ կարէին։ Առաջնորդն ասէր. Հրամանաւ կաթողիկոսին նստեալ եմ աստ և հաւանութեամբ ամենայն քաղաքիս, և ոչ ոք է իմ ներհակ. դու զի՞ ունիս ընդ իս. թէ՝ եկիր քաղաքս, ըստակ ժողովեցիր և պատիւ ընկալար՝ ե՛լ և գնա՛, և թէ ոչ երթաս՝ յակամայ առաքեցիս զքեզ. այլ և սոյնպիսիք, և ամենայն քաղաք իմ ընդ իմ է, և չեմ իբրև զքեզ, որ նման քեզ մի քանի մարդոյ հաւատաս[1]) զանձն քո։ Երթային և գային. և նա գրէր թէ Զքաղաքդ ես ի հեայ եմ առեր, ես կու նստիմ, կամ թէ զո՞վ կու վարես. ես զիմ ձիս կապեալ երթալոց էի, երբ այդպէս կ'ուղարկես՝ չեմ երթար, զքեզ կու հանեմ, ի Զօպան քեռփրուսուն մարդ չեմ անցներ. սոյնպիսիք։ Եւ արքն կովարարք երբեմն երբեմն գային առ միմեանս սակաւքն յերկու կողմանց ի խանն և բազումքն յեկեղեցիսն։ Եղիազարն չերթայր այն անուամբ եւ իւրքն զիւրեանց նուաստութիւն ոչ կամէին. Առաջնորդն չկամէր բաժանիլ և իւրքն նախանձեալ ընդ միւս կողմին, փութային զխայտառակելն՝ թէ խօսք մեր լիցի։ Եւ երթային այլք ի բարեխօսութիւն Եղիազարին. ուրիշ խօսիւք դարձուցանէր որ չէր հաւան Յովանէսն, երթային առ նայ և նայ խօսէր որ այն հաւան չէր։

Եւ Զչի (14 Սեպտ.) Բ Բ մարդ յեկեղեցեացն եւ

1) աւատաս.